ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2022թ. N 200-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ՁԱԽԱՓՆՅԱԿ ԹԱՂԱՄԱՍԻ 15-ՐԴ ՓՈՂՈՑԻ ՎՐԱ ԳՏՆՎՈՂ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՄԱՐԵԼՈՒ, ՕՐԻՆԱԿԱՆԱՑՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2021 թվականի դեկտեմբերի 16-ի ՀՕ-397-Ն օրենքի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ և 24-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 50-րդ և 55-րդ կետերի, 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն և N 912-Ն որոշումների, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Հրանտիկ Գավրուշայի Բալասանյանի դիմումը (մտից՝ 2021 թվականի հունվարի 26-ի N 166)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 15-րդ փողոցի վրա գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող 42,8 քառակուսի մետր մակերեսով հողամասում ինքնակամ կառուցված 42,8 քմ արտաքին մակերեսով (ներքին մակերեսը՝ 37,81 քմ) ավտոտնակը (այսուհետ՝ շինություն) համարել Ջերմուկ համայնքի սեփականությունը և ճանաչել օրինական. ՀՀ Կադաստրի կոմիտեում հաշվառման ծածկագիր՝ 20224CIOII:

2. Ընդունել ի գիտություն, որ՝

ա) շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը.

բ) շինությունը, համաձայն համայնքի գլխավոր հատակագծի և համայնքին փոխանցված հողերի ցանկի, կառուցված չէ Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում.

գ) շինությունը կառուցված չէ քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չի առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք:

3. Հաստատել սույն որոշման 1-ին կետով օրինական ճանաչված շինության և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասի հատակագծերը (կցվում են):

4. Սույն որոշման 1-ին կետում նշված շինությանը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, ք. Ջերմուկ, Ձախափնյակ թաղամաս, 15-րդ փողոց N 1/28:

5. Սույն որոշումից ծագող իրավունքի պետական գրանցման օրվանից 15 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր առաջարկություն ներկայացնել ինքնակամ կառույցն իրականացրած Ջերմուկ քաղաքի բնակիչ Հրանտիկ Գավրուշայի Բալասանյանին՝ սույն որոշման 1-ին կետում նշված օրինականացված շինությունը և համապատասխան հողամասը գնման նախապատվության իրավունքով (ուղղակի վաճառք) ձեռք բերելու մասին:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 1
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

1 օգոստոսի 2022թ. N 199-Ա

«ՄՈՒՇԵՂ ՀԷԿ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՊԱՏԿԱՆՈՂ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՆ՝ ՈՉ ԲՆԱԿԵԼԻ ՏԱՐԱԾՔԻՆ, ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 24-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգով և հաշվի առնելով «Մուշեղ ՀԷԿ» ՍՊ ընկերության տնօրեն Մ. Մանուկյանի դիմումը (մտից N 1195, 29.07.2022 թ.) ***որոշում եմ***՝

1. «Մուշեղ ՀԷԿ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Մյասնիկյան փողոցի 18-րդ շենքի 1-ին հարկի աջակողմյան հատվածում գտնվող հասարակական նշանակության 111,4 քմ մակերեսով ոչ բնակելի տարածքին տրամադրել հետևյալ հասցեն՝

Ջերմուկ համայնք, քաղաք Ջերմուկ, Մյասնիկյան փողոց, 18-րդ շենք N 2 տարածք:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի տարածքային ստորաբաժանման կողմից:

3. Սույն որոշումն ուժի մեջ է հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. օգոստոսի 1
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2022թ. N 198-Ա

«ՀԷՑ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ՋԵՐՄՈՒԿ ՔԱՂԱՔԻ ԲՆԱԿԻՉ ԳՈՒՐԳԵՆ ԱՎԱԳՅԱՆԻՆ ՊԱՏԿԱՆՈՂ ՏԱՐԱԾՔԻ ԷԼԵԿՏՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՀԱՄԱՐ ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի «Հայաստանի Հանրապետությունում կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» N 596-Ն որոշմամբ հաստատված կարգի 23.1 կետով, 98-րդ կետի 2-րդ պարբերությամբ, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի «ա» ենթակետով, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հաշվի առնելով «ՀԷՑ» ՓԲ ընկերության դիմումը (մտից՝ 2022 թվականի հուլիսի 27-ի N 1179՝) ***որոշում եմ՝***

1. «ՀԷՑ» ՓԲ ընկերությանը՝ ի դեմս «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ի, տալ շինարարության թույլտվություն Ջերմուկ համայնքի Ջերուկ քաղաքի բնակիչ Գուրգեն Լենիկի Ավագյանին պատկանող, Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցի N 5/1 հասցեում գտնվող տարածքի 0,4 կՎ էլեկտրամատակարարման աշխատանքների կատարման համար:

2. «ՀԷՑ» ՓԲ ընկերությունը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031567 հաշվեհամարին մուծել 6000 (վեց հազար) դրամ տեղական տուրք՝ որպես շենքերի և շինությունների արդիականացման համար նախատեսված տուրք:

3. Շինարարական աշխատանքները կատարելիս անհրաժեշտ է տեղեկացնել «Ջերմուկ համայնքի կոմունալ սպասարկում և բարեկարագում» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը, Հայաստանի Հանրապետության ոստիկանության Վայոց ձորի ճանապարհային ոստիկանությանը և մյուս շահագրգիռ կազմակերպություններին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում «ՀԷՑ» ՓԲ ընկերության կապալառու և լիազորված «ՎՈԼԻՈՍ նախագծային ինստիտուտ» ՓԲԸ-ին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 29
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2022թ. N 197-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նաիրի Հարությունյանի հայտը (մտից՝ N 1191, 2022 թվականի հուլիսի 29) ***որոշում եմ***՝

1. Նաիրի Հարությունյանին տալ Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղի 7 հասցեում գտնվող ռեստորանում ոգելից, ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 92):

2. Նաիրի Հարությունյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ՝ հուլիս–սեպտեմբեր եռամսյակն ընդգրկող գործունեության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նաիրի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2022թ. N 196-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՆԱԻՐԻ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ - ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Նաիրի Հարությունյանի հայտը (մտից՝ N 1191, 2022 թվականի հուլիսի 29)՝ ***որոշում եմ***՝

1. Նաիրի Հարությունյանին 2022 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Երևանյան խճուղի 1 հասցեում գտնվող ռեստորանում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն (Թույլտվություն N 93):

2. Նաիրի Հարությունյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031435 հաշվեհամարին գործունեության ընթացքի յուրաքանչյուր եռամսյակի համար վճարելու տեղական տուրք՝ 5000 (հինգ հազար) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Նաիրի Հարությունյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև ս/թ սեպտեմբերի 30-ը ներառյալ:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2022թ. N 195-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱԼՄԵԴԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Ալմեդա Գրիգորյանի հայտը (մտից՝ N 1192, 2022 թվականի հուլիսի 29) ***որոշում եմ՝***

1. Ալմեդա Գրիգորյանին 2022 թվականի հուլիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակի 3-րդ շենքի հարևանությամբ գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 103):

2. Ալմեդա Գրիգորյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 և 900365031351 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 7500-ական (յոթ հազար հինգ հարյուրական) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ալմեդա Գրիգորյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարած լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2022թ. N 194-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿՈՐՅՈՒՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍ-ԴԵԿՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Կորյուն Մկրտչյանի հայտը (մտից՝ N 5, 2021 թվականի հունվարի 4) ***որոշում եմ՝***

1. Կորյուն Մկրտչյանին 2022 թվականի հունիս-դեկտեմբեր ամիսների ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոց N 24/4 հասցեում գտնվող ռեստորանում ոգելից, ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 88):

2. Կորյուն Մկրտչյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 9750-ական (ինը հազար յոթ հարյուր հիսունական) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կորյուն Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարած լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2022թ. N 193-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԿՈՐՅՈՒՆ ՄԿՐՏՉՅԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հաշվի առնելով Ջերմուկ քաղաքի բնակիչ Կորյուն Մկրտչյանի դիմում-հայտը (մտից՝ 5, 2022 թվականի հունվարի 4) ***որոշում եմ՝***

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Կորյուն Մկրտչյանին տեղադրելու արտաքին գովազդ (Թույլտվություն N 89):

2. Կորյուն Մկրտչյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1 125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Կորյուն Մկրտչյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարած լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2022թ. N 192-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ ԱՐՏԱՔԻՆ ԳՈՎԱԶԴ ՏԵՂԱԴՐԵԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 12-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հաշվի առնելով անհատ ձեռնարկատեր Հասմիկ Առաքելյանի դիմում-հայտը (մտից՝ 1032, 2022 թվականի հուլիսի 1) ***որոշում եմ՝***

1. Թույլատրել անհատ ձեռնարկատեր Հասմիկ Առաքելյանին տեղադրելու արտաքին գովազդ (Թույլտվություն N 78):

2. Հասմիկ Առաքելյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031484 հաշվեհամարին յուրաքանչյուր ամիս մուծել 1 125 (հազար հարյուր քսանհինգ) դրամ տեղական տուրք 1 քմ-ի համար՝ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հասմիկ Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարած լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2022 թ. N 191-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով Ա/Ձ Հասմիկ Առաքելյանի հայտը (մտից՝ N 1034, 2022 թվականի հուլիսի 1)՝ ***որոշում եմ***՝

1. Ա/Ձ Հասմիկ Առաքելյանին 2022 թվականի հուլիս-սեպտեմբեր ամիսների ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Բարեկամության փողոցի N 7 հասցեում գտնվող սպասարկման օբյեկտում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն (Թույլտվություն N 77):

2. Ա/Ձ Հասմիկ Առաքելյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031435 հաշվեհամարին գործունեության ընթացքի յուրաքանչյուր եռամսյակի համար վճարելու տեղական տուրք՝ 11250 (տասնմեկ հազար երկու հարյուր հիսուն) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ա/Ձ Հասմիկ Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև ս/թ սեպտեմբերի 30-ը:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 29
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

29 հուլիսի 2022թ. N 190-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՀԱՍՄԻԿ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ 2022թ-ի ՀՈՒԼԻՍ-ՍԵՊՏԵՄԲԵՐ ԱՄԻՍՆԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Հասմիկ Առաքելյանի հայտը (մտից՝ N 1033, 2022 թվականի հուլիսի 1) ***որոշում եմ՝***

1. Հասմիկ Առաքելյանին տալ Ջերմուկ քաղաքի Բարեկամության փողոցի N 7 հասցեում գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 76):

2. Հասմիկ Առաքելյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 հաշվեհամարին վճարելու տեղական տուրք՝ 15 000 (տասնհինգ հազար) դրամ՝ հուլիս–սեպտեմբեր եռամսյակն ընդգրկող գործունեության համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հասմիկ Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է մինչև 2022 թվականի սեպտեմբերի 30-ը ներառյալ:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 29
Ջերմուկ

Ձև N 2-4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

Վայոց ձորի մարզ Ջերմուկ համայնք

(ՀՀ մարզ, համայնք)

ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ

N 1 01. 08. 2022 թ.

Տրված է կառուցապատող Ազնիվ Առաքելյան Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ 1 փողոց, տուն 4 -ին

(դիմող իրավաբանական անձի անվանումը, գտնվելու վայրը, ֆիզիկական անձի անունը,

Վայոց ձորի մարզ, Ջերմուկ համայնք, գ. Գնդեվազ 1 փողոց, տուն 4, վկայական N08052015-10-0006

ազգանունը, բնակության վայրը, հողամասի գտնվելու վայրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականի համարը)

կառուցապատվող հողամասի գլխավոր հատակագծի վրա _____ համարների տակ

նշված թոնրատուն, խորդանոց, ավտոտնակ, բաղնիք, բնակելի տուն, ծածկ, ծածկ

(նշվում են ամբողջությամբ կամ մասամբ քանդման ենթակա օբյեկտները, դրանց արտաքին հարաչափերը, ընդհանուր,

_____ շենքի

(շենքերի) և կամ

շինության թոնրատուն (23.8 քմ), խորդանոց (19.8 քմ), ավտոտնակ (21 քմ), բաղնիք (9.8 քմ), բնակելի տուն(289.2 քմ), ծածկ (14.8 քմ), ծածկ (55.1 քմ)

բնակելի, օգտակար մակերեսը, հարկայնությունը, շինանյութերը և այլն)

շինությունների) վկայական N08052015-10-0006 սեփականատիրոջ

(օգտագործողին՝ նշվում է անշարժ գույքը փոփոխության ենթարկելու իրավազորությունը գրանցած՝ ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի տարածքային մարմնի կողմից տրված վկայականի համարը)

քանդման (ապամոնտաժման) աշխատանքներն իրականացնելու համար:

Քանդումն (ապամոնտաժումն) իրականացվում է՝ բնակելի տուն կառուցելու նպատակով՝

(նշվում է քանդման նպատակը)

24 ամսվա ընթացքում:

(նշվում է քանդման աշխատանքների տևողությունը)

1. Նախագծային փաստաթղթերը՝

1) մշակվել են _____
կողմից.
(նախագծային աշխատանքների կապալառուի անվանումը, լիցենզիայի համարը)

2) սահմանված կարգով համաձայնեցվել են իրավասու մարմնի, օրենքով սահմանված այլ
շահագրգիռ մարմինների հետ Ջերմուկի համայնքապետարան.
(նշվում են մարմինների անվանումները և համաձայնեցման ժամկետները)

3) ստացել են ՀՀ օրենսդրությամբ սահմանված փորձաքննության կամ մասնագիտական
դրական եզրակացությունները՝
_____
_____կողմից:
(նշել փորձաքննության մարմնի (մարմինների) կամ երաշխավորագիր ներկայացնող կապալառուի անվանումը)

Քանդման (ապամոնտաժման) ենթակա են միայն թույլտվության մեջ նշված օբյեկտները:

2. Հատուկ պայմաններ՝

1) կառուցապատողը նախքան աշխատանքներն սկսելը, ինչպես նաև դրանց ընթացքում, պարտավոր է հասցվելիք վնասների փոխհատուցման համար համաձայնության գալ կառուցապատման հետևանքով վնասներ կրող սուբյեկտների հետ.

2) թույլտվության հիման վրա ցանկացած աշխատանք կարող է իրականացվել բացառապես Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան.

3) պատմամշակութային հուշարձանի ապամոնտաժման, տեղափոխման և վերականգնման աշխատանքների իրականացման դեպքում ապամոնտաժման թույլտվությունը տրվում է՝ հիմք ընդունելով՝

ա. Հայաստանի Հանրապետության կառավարության _____ _____20_____ թ.
N _____ որոշումը (նշվում է ՀՀ կառավարության որոշումը՝ հուշարձանը նպատակահարմար տարածք տեղափոխելու վերաբերյալ),

բ. պատմամշակութային հուշարձանների բնագավառի լիազորված մարմնի՝ հուշարձանի տեղափոխման նախագծային առաջադրանքը (տեխնիկական բնութագիրը) և նրա դրական եզրակացությունը նոր տեղում հուշարձանի վերականգնման (վերստեղծման) առաջադրանքի, տեխնիկական և հնագիտական պայմանների, ինչպես նաև ՀՀ կառավարության 2002 թվականի ապրիլի 20-ի N 438

որոշմամբ սահմանված պահանջների ապահովմամբ կազմված նախագծային փաստաթղթերը,

գ. վերականգնման տարածքի հատկացման փաստաթղթերը:

3. Այլ պայմաններ_____:

(նշվում են իրավական ակտերով և (կամ) պայմանագրով նախատեսված այլ պայմանները)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝

_____ Վահագն Արսենյան

(ստորագրությունը) (անունը, ազգանունը)

Կ.Տ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

28 հուլիսի 2022թ. N 189-Ա

ՔԱՆԴՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 42-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշման, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման և հաշվի առնելով Ա. Վ. Առաքելյանի դիմումը և Ա. Է. Մկրտչյանի և Ա. Վ. Դովլաթյանի համատեղ համաձայնությունը (մտիցներ՝ 2022 թվականի հուլիսի 15-ի N 1103 և հուլիսի 27-ի N 1166)՝ ***որոշում եմ՝***

1. Ջերմուկ համայնքի Գնդեվազ գյուղի բնակիչ Ազնիվ Վահանի Առաքելյանին տալ Գնդեվազ գյուղի 1-ին փողոցի N 4 հասցեում գտնվող 23,8 քմ մակերեսով թոնրատան, 19,8 քմ մակերեսով խորդանոցի, 21 քմ մակերեսով ավտոտնակի,9,8 քմ մակերեսով բաղնիքի, 289,2 քմ մակերեսով բնակելի տան, 14,85 քմ և 55,1 քմ մակերեսներով ծածկերի ամբողջական քանդման թույլտվություն (քանդման թույլտվությունը կցվում է):

2. Ազնիվ Վահանի Առաքելյանը պարտավոր է Ջերմուկի համայնքապետարանի 900365031328 հաշվեհամարին մուծել 1500 (հազար հինգ հարյուր) դրամ տեղական տուրք՝ քանդման թույլտվության համար:

3. Կառուցապատման նպատակով շինարարական աշխատանքները սկսելուց առնվազն երեք օր առաջ Ազնիվ Վահանի Առաքելյանը պարտավոր է Ջերմուկ համայնքի ղեկավարին ներկայացնել N 2-5 ձևի տեղեկանք:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Ազնիվ Վահանի Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ

2022 թ. հուլիսի 28
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2022թ. N 188-Ա

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 16-Ի N 106-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներին համապատասխան՝ ***որոշում եմ***

1. Ջերմուկ համայնքի ղեկավարի 2021 թվականի փետրվարի 16-ի «Ջերմուկ համայնքի Ջերմուկ քաղաքի Ձախափնյակ թաղամասի 17-րդ շենքի հարեվանությամբ գտնվող համայնքի սեփականություն հանդիսացող հողամասում ինքնակամ կառուցված շինությունը համայնքի սեփականություն համարելու, օրինականացնելու և հասցե տրամադրելու մասին» N 106–Ա որոշման 4-րդ կետում «*1/37*» թիվը փոխարինել «*2/37*» թվով:

2.. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 թ. հուլիսի 27
ք. Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2022թ. N 187-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՍԱՄՍՈՆ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀԱՆՐԱՅԻՆ ՍՆՆԴԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԻՐԱՑՄԱՆ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, Ջերմուկ համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով Ա/Ձ Սամսոն Մանուկյանի հայտը (մտից՝ N 5, 2022 թվականի հունվարի 4)՝ ***որոշում եմ՝***

1. Ա/Ձ Սամսոն Մանուկյանին 2022 թվականի ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Շահումյան փողոցը N 7 հասցեում գտնվող օբյեկտում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվություն (Թույլտվություն N 101):

2. Ա/Ձ Սամսոն Մանուկյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031435 հաշվեհամարին գործունեության ընթացքի յուրաքանչյուր եռամսյակի համար վճարելու տեղական տուրք՝ 7500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Սամսոն Մանուկյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարած լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2022թ. N 186-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՀՐԱՄ ԱՌԱՔԵԼՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Վահրամ Առաքելյանի հայտը (մտից՝ N 5, 2022 թվականի հունվարի 4) ***որոշում եմ՝***

1. Վահրամ Առաքելյանին 2022 թվականի ընթացքում տալ Ջերմուկ համայնքի Կեչուտ գյուղի 7-րդ փողոցի վրա գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 102):

2. Վահրամ Առաքելյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 3000 (երեք հազար) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Վահրամ Առաքելյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարած լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

27 հուլիսի 2022թ. N 185-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՄԵԽԱԿ ՋԱՋՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Մեխակ Ջազյանի հայտը (մտից՝ N 5, 2022 թվականի հունվարի 4) ***որոշում եմ*** ՝

1. Մեխակ Ջազյանին 2022 թվականի ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Շահումյան 4 հասցեում գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների արտադրանքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 64):

2. Մեխակ Ջազյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 7 500 (յոթ հազար հինգ հարյուր) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Մեխակ Ջազյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարած լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 27
Ջերմուկ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

26 հուլիսի 2022թ. N 184-Ա

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ԱՐԱԳԱԾ ԽԱՉԱՏՐՅԱՆԻՆ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈԳԵԼԻՑ ԵՎ ԱԼԿՈՀՈԼԱՅԻՆ ԽՄԻՉՔՆԵՐԻ, ԾԽԱԽՈՏԻ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի 19-ի N 843-Ն որոշման, Ջերմուկի համայնքի ավագանու 2022 թվականի հունվարի 11-ի N 5-Ն որոշման, հիմք ընդունելով անհատ ձեռնարկատեր Արագած Խաչատրյանի հայտը (մտից՝ N 5, 2022 թվականի հունվարի 4) ***որոշում եմ՝***

1. Արագած Խաչատրյանին 2022 թվականի ընթացքում տալ Ջերմուկ քաղաքի Ձախափնյակի 3-րդ շենքի հարևանությամբ գտնվող խանութում ոգելից, ալկոհոլային խմիչքների և ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվություն (Թույլտվություն N 24):

2. Արագած Խաչատրյանին պարտավորեցնել Ջերմուկի համայնքապետարանի 900365031336 և 900365031351 հաշվեհամարներին վճարելու տեղական տուրք՝ 7 500-ական (յոթ հազար հինգ հարյուրական) դրամ՝ յուրաքանչյուր եռամսյակի համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Արագած Խաչատրյանին որոշման ընդունման մասին իրազեկելուն հաջորդող օրվանից և ուժի մեջ է սույն որոշման 2-րդ կետում նշված տեղական տուրքը վճարած լինելու հանգամանքով պայմանավորված:

ՋԵՐՄՈՒԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ՎԱՀԱԳՆ ԱՐՍԵՆՅԱՆ**

2022 հուլիսի 26
Ջերմուկ